Դիտարկումներ և առաջարկներ
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի առանձին կարգավորումների վերաբերյալ

1. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է.

1) դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար սահմանել պետական տուրք բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով,
2) գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով
3) դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար՝ պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի չափով:

Նշված կարգավորումներն ըստ էության անփոփոխ կերպով պահպանում են գործող օրենքով սահմանված դրույթների բովանդակությունը: Գտնում ենք, որ պետական տուրքի վերը նշված չափերը ակնհայտ գերազանցում են համապատասխան պատճենները կամ լազերային սկավառակ պատրաստելու համար կատարվելիք ծախսը: Տվյալ պարագայում ակնհայտ է, որ մեկ պատճենահանված էջի ինքնարժեքը չի կարող լինել 150 ՀՀ դրամ, իսկ լազերային կրիչի գինը՝ 1000 ՀՀ դրամ: Պետական տուրքի նման դրույքաչափերի սահմանումը ուղղակի խոչընդոտ է հանդիսանում անձի տեղեկատվության ազատության իրավունքի, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման գործընթացում:

Առաջարկ.
Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկում ենք փոփոխել նախագծի նշված դրույթները՝ դատավարական փաստաթղթերի պատճենների և լազերային սկավառակների համար սահմանելով համաչափ պետական տուրքեր:

2. Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է.
Դատարանում պետական տուրքի վճարումից ազատել արդարացվածներին՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով: Նշված կարգավորումը նույնպես վերարտադրում է գործող օրենքով սահմանված դրույթի բովանդակությունը:

Անօրինական ձերբակալման կամ կալանավորման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքից ազատելով բացառապես արդարացված անձանց՝ պետությունը խտրականություն կդրսևորի այն անձանց նկատմամբ, ով թեև չի արդարացվել /դատապարտվել է կամ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով/, սակայն ևս ենթարկվել է ազատությունից ապօրինի զրկման, օրինակ՝ այն անձանց նկատմամբ, ում նկատմամբ կիրառված ձերբակալումը կամ կալանավորումը վերադաս ատյանների կողմից ճանաչվել է ապօրինի: Այս խտրականությունն ավելի ակնհայտ է այն իրողության պայմաններում, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն արդեն իսկ հավասարապես երաշխավորում է վերը նշված երկու խմբերի իրավունքը պահանջելու վնասների, այդ թվում՝ ոչ նյութական վնասի հատուցում անձնական ազատության իրավունքի ապօրինի սահմանափակման հաամար:

Առաջարկ.
Առաջարկվում է նախագծում կատարել փոփոխություն՝ դատարան դիմելու համար պետական տուրքից ազատելով անձին՝ ապօրինի ձերբակալման և կալանավորման հետևանքով հասցված վնասների հատուցման հայցերով:

3. Նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ ալիմենտի գանձման կամ ալիմենտի չափի ավելացման վերաբերյալ հայցերով:

Նշված արտոնության շրջանակը վերանայելիս պետք է հաշվի առնել նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված պատասխանատվությունը ալիմենտը ժամանակին չվճարելու համար (հոդված 103): Մասնավորապես, դատարանի վճռով ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձը ալիմենտ ստացողին ուշացրած յուրաքանչյուր օրվա համար տուգանք է վճարում չվճարված ալիմենտի գումարի 0.05 տոկոսի չափով:

Առաջարկ.
Առաջարկվում է վերոգրյալ արտոնության շրջանակներում ներառել նաև հայցվորներին՝ ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանքի բռնագանձման հայցերով՝ նշված խմբի հայցվորների նկատմամբ տարբերակված մոտեցում դրսևորելու հիմնավորման բացակայության պատճառաբանությամբ:

4. Գործող իրավակարգավորումներով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը հայցադիմում ներակայցնելիս նախատեսում է հայցագնի որոշակի տոկոսի պետական տուրքի վճարում, պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3 նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով: Գտնում ենք, որ հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից անձանց այլ հիմնարար իրավունքների խախտման դեպքերում ևս հայցվորները պետք է ազատված լինեն իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով պետական տուրքի վճարից՝ հաշվի առնելով դատարանի մատչելիության իրավունքի կարևորությունը խախտված իրավունքի պաշտպանության և վերականգնման համար:

Առաջարկ.
Հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից անձանց խախտված հիմնարար իրավունքների պաշտպանության և դրանց համար վնասների, այդ թվում՝ նյութական և բարոյական, հատուցում պահանջելու գործերով հայցվորներին ազատել պետական տուրք վճարելու պարտականությունից:

5. Վարչական գործերով վարույթը
Հաշվի առնելով վարչական գործերի առանձնահատկությունները՝ պետական տուրքերի դրույքաչափերի առավել քան երկու անգամ բարձրացումը՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով սահմանելը (10000 ՀՀ դրամ), արգելք է հանդիսանալու քաղաքացիների համար պետական մարմինների դեմ հայցադիմումներ ներկայացնելու համար և նրանց դնում է ակնհայտ անհավասար վիճակում:
Ինչպես երևում է Նախագծի հիմնավորումներից, նմանատիպ փոփոխությունները կատարվում են դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով, սակայն անհրաժեշտ է նշել, որ դատարաններում վարչական մարմինների դեմ դատական գործերի քանակը սահմանափակելու առավել արդյունավետ միջոց է վերջիններիս գործունեության, այդ թվում հիմնավորված վարչական ակտեր կայացնելու ունակության բարելավումը, և ոչ քաղաքացիների՝ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը և հայցադիմում ներկայացնելու զսպումը:

Ավելին, նախագծով առաջարկվող փոփոխություններով պետական տուրքի վճարման արտոնություններից այլևս չեն օգտվելու վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով հայցվորները:
Նմանատիպ փոփոխությունը սահմանափակում է անձանց՝ դատարան դիմելու հնարավորությունները պետական մարմինների կողմից կայացված վարչական իրավախախտումների մասին ակտերը բողոքարկելու նպատակով, այդ թվում, օրինակ, նվազագույն աշխատավարձի չափով (1000 ՀՀ դրամ) տուգանքի առնչությամբ, անձը պետք է վճարի նվազագույն աշխատավարձի քառապատիկի /4000 ՀՀ դրամ/ չափով պետական տուրք, ինչը անհամաչափ է և հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության և սեփականության իրավունքներին:
Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունել է վարչական ակտերի դատական վերահսկողության (2004)20 հանձնարարականը, որով սահմանվում է, մասնավորապես, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը:
Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ, բայց կարող է ենթարկվել սահմանափակումների: Այնուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը

հոդված 6-ի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalfaoui v. France), թիվ 34791/97, կետ 35, ECHR 1999-IX և Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France), թիվ 54210/00, պարբ. 90, ECHR 2002-VII):
ՀՀ սահմանադրական դատարանը 25 մայիսի, 2010 թվականի ՍԴՈ–890 որոշմամբ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինական շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինական շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ (ՀՀ սահմանադրական դատարան, որոշում թիվ ՍԴՈ-890, կետ 6:):
ՀՀ սահմանադրական դատարանը 26.05.2015 թվականի 1210 որոշմամբ քննության առարկա է դարձրել այն հարցը, թե արդյոք անձին տուգանքի տեսքով պատասխանատվության ենթարկելիս երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար անհրաժեշտ և բավարար նախապայմաններ: Դատարանը հղում է կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումների, մասնավորապես, Միկրոինտելեկտ ՍՊԸ-ն ընդդեմ Բուլղարիայի 2014 թվականի մարտի 4-ի վճռում (Microintelect OOD v. Bulgaria, 34129/03), որը վերաբերում է վարչական մարմնի որոշմամբ անձի գույքի բռնագանձմանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ բռնագանձման իրականացումը վարչական մարմնի կողմից վերահսկողություն է սեփականության օգտագործման նկատմամբ և հանդիսանում է հարկերի և տուգանքի վճարման ապահովման միջոց: Դատարանը համանման կարծիք հայտնել էր նաև Գասուս Դոսիերը և Ֆորդերտեքնիկն ընդդեմ Նիդեռլանդերի գործով (Gasus Dosier-und Fordertechnik GmbH v. The Netherlands, 15375/89, 23.02.1995թ.):
Այդ գործերով Եվրոպական դատարանը նաև նշել էր, որ անձի սեփականության բռնագանձման դեպքում հատկապես կարևորվում է նման որոշման դեմ բողոք բերելու արդյունավետ միջոցների ապահովումը, չնայած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով ուղղակիորեն նախատեսված չէ նման պահանջ:
Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ գտել է, որ հիմնական եզրահանգումն այն է, որ օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում: Էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է:

Փաստորեն, անձը նվազագույն աշխատավարձի չափով պատասխանատվություն սահմանող վարչական ակտը Դատարանում վիճարկելու համար պետք է վճարի պետական տուրք՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով: Դեռ ավելին՝ իր իրավունքների արդյունավետ պաշտպանության չհասնելով առաջին ատյանում՝ դատական ակտը վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկելու համար պետք է վճարի համապատասխանաբար նվազագույն աշխատավարձի 15-ապատիկի և 20-ապատիկի չափով գումար, ինչը դատական պաշտպանության, դատարանի հասանելիության իրավունքը դարձնում է պատրանքային և ոչ արդյունավետ:

Առաջարկ.
Չփոփոխել վարչական մարմինների դեմ ներկայացվող հայցերով պետական տուրքի դրույքաչափերը, այդ թվում՝ վարչական իրավախախտման գործերով վարչական ակտերի բողոքարկման դեպքում հայցվորին ազատել պետական տուրքի վճարից:

6. Նախագծով չի կարգավորվել նաև դիտորդական կազմակերպությունների համար պետական տուրքի վճարումից ազատման արտոնության տրամադրման հարցը՝ ընտրությունների հետ անմիջականորեն կապված զանցանքների կատարման համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարող են դիմել նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ **<u>այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները</u>,** ինչպես նաև հանրաքվեի ժամանակ՝ քարոզչության կողմը՝ օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ինչպես նաև Վարչական դատավարության օրենսգրքում դիտորդական կազմակերպություններին ընտրությունների հետ առնչվող վարչական իրավախախտումներով վարչական պատասխանատվության ենթարկելու հայցով դատարան դիմելու իրավունքը սահմանվել է 07.08.2018թ. ընդունված՝ համապատասխանաբար ՀՕ-376-Ն և ՀՕ-377-Ն օրենքներով: Նախագծի հիմնավորումով մատնանշվել է, որ համապատասխան իրավախախտումները հաճախ արձանագրում են երկարաժամկետ (քարոզարշավի ժամանակ) եւ կարճաժամկետ (քվերկության օրը) դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաեւ հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը: Գործող իրավակարգավորումներով նշված բոլոր սուբյեկտները պետք է դիմեն իրավասու ընտրական հանձնաժողով՝ արձանագրություն կազմելու եւ դատարան դիմելու պահանջով: Շեշտվել է նաև, որ այս ընթացակարգը հակասում է հանրային ռեսուրսները խնայելու, դրանք առավել արդյունավետ ծախսելու, ընտրությունների ժամանակաշրջանում ընթացակարգերը նվազ ժամանակատար սահմանելու տրամաբանությանը:

Այս գործերով դիտորդական կազմակերպությանը դատարան դիմելու իրավունքի վերապահումը օրենսդրի կողմից հետապնդում է ընտրությունների օրինականության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման նպատակ: Ակնհայտ է, որ նշված գործերով հայցադիմումներ ներկայացնելով, դիտորդական կազմակերպությունը որևէ մասնավոր շահ չի հետապնդում, փոխարենը հետապնդում է ՀՀ ընտրական օրենսդրության

պահանջների կատարման ապահովման, ընտրությունների անցկացման օրինականության ապահովմանը նպաստելու նպատակ: Դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն, կարող է առհասարակ չունենալ ինքնուրույն գույքային միջոցներ, միևնույն ժամանակ տվյալ իրավունքի իրականացման շրջանակներում հետապնդում է բացառապես հանրային շահի իրացման նպատակ՝ այդ թվում հանրային ռեսուրսները խնայելու, դրանք առավել արդյունավետ ծախսելու, ընտրությունների ժամանակաշրջանում ընթացակարգերը նվազ ժամանակատար դարձնելու միջոցով՝ ակնհայտորեն հայտնվելով անհավասար պայմաններում ընտրությունների հետ կապված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող մարմինների հետ (որոնք, ի տարբերություն դիտորդական կազմակերպությանը, ունեն նշված հանրային գործառույթի ապահովման համար բյուջետային միջոցներ՝ դատարան ներկայացվող հայցադիմումներով պետական տուրքերի վճարման համար): Տվյալ պայմաններում խախտվում է հավասարակշռությունը մի կողմից դատարաններում պետական տուրք գանձելու հանրային շահի և մյուս կողմից՝ դիտորդական կազմակերպության միջոցով ընտրությունների հետ անմիջականորեն կապված զանցանքներ կատարած սուբյեկտներին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հանրային շահի միջև:

Առաջարկ.
Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Նախագծով դիտորդական կազմակերպությունների համար սահմանել պետական տուրքի վճարումից ազատման արտոնություն՝ ընտությունների հետ անմիջականորեն կապված զանցանքների կատարման համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով:

7. Պատժի կրման ընթացքում ծագող իրավահարաբերությունների վերաբերյալ գործերը նախկինում քննվում էին ընդհանուր իրավասության դատարանների կողմից՝ որպես քրեահրավական հարաբերություններից ծագող գործեր և օրենքով նշված որոշումների դեմ բողոքարկման ժամկետներ սահմանված չէին: ՀՀ Սահմանադրական դատարանը 22.01.2019թ. որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «...մինչև Ազգային Ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից»:
Հիշյալ որոշումից հետո կալանավորված անձինք և դատապարտյալները քրեակատարողական հիմնարկի որոշումները վիճարկում էին վարչական դատարաններում, վարչական դատարանները լավագույն դեպքում հետաձգում են պետական տուրքի վճարումը, սակայն ազատազրկված անձանց պետական տուրքից չեն ազատում, որը լուրջ խնդիր է հատկապես աշխատանք և եկամուտ չունեցող դատապարտյալների համար:

Առաջարկ:
Ազատել դատապարտյալներին և կալանավորված անձանց՝ քրեակատարողական հիմնարկի որոշումների, գործողությունների կամ անգործության վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարման պարտականությունից.

8. Գտնում ենք, որ ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով պետական տուրքի գործող դրույքաչափերի զգալի բարձրացումը պարունակում է անձի դատական պաշտպանության իրավունքի անհամարափ սահմանափակման ուղղակի վտանգ: Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական ցուցանիշները, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, որը 2020թ: առաջին եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմում է 34684.0 ՀՀ դրամ, ակնհայտ է, որ առաջարկվող իրավակարգավորումների արդյունքում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվում է այն կերպ կամ այն աստիճան, որ խախտվում է այս իրավունքի բուն էությունը:

Առաջարկ.
Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հրաժարվել պետական տուրքի գործող դրույքաչափերի բարձրացմանն ուղղված բոլոր կարգավորումներից: